

ՆԵՍՏՈՐԱՆԿԱՆ ԵՎԵՂԵՑԻՆ ԵՒ ՆՐԱ ՆՇԱՆՈՒ
ԿՈՒԹՎՆԵՐԻ 4

Քրիստոնէութիւնը որ դարերի ընթացքում ամբողջ արեւմուտքը նուաճեց, ինչպէս յայտնի է, ծնաւ և աճեց առաջաւոր Ասիայում: Երօնից որդանում, Թէ ինչպէս հռոմէական կայսրութեան անկման շքրջանում տարածուեց այն դէպի արեւմուտք և հասաւ գերմանական ու պաւնական ազգերին: յայտնի է մեզ, Սակոյն մենք աւելի քիչ տեղեակ ենք քրիստոնէական վարդապետութեան դէպի արեւելք, դէպի հեռուոր Ասիա, տարածուելու պատմութեան: նորագոյն ժամանակներում միայն աւելի լոյս սփռուեցաւ այդ պատմութեան վերայ: Ռուս Զանաւեր հետազոտողները, որոնց բազմաթիւ անուններից յիշենք միայն Խուլստին, Անդրիսիսկուն, Պոյարսկուն և Պանտուտովին, յաջողեցան քրիստոնէական գաղութների մնացորդներ և առհասարակ քրիստոնէական կեանքի հետքեր գտնել Միջին Ասիայում: Ահա այս գտնուած հետքերի շնորհիւ միայն հնար ունինք այժմ մի որոշ չափով պարզ պատկեր կազմելու: Թէ ինչ ձանապարհով է Աւետարանը դէպի Արեւելք թափանցել, Պատմագրութեան օժանդակութեամբ այսօր հետեւել պատկերն ենք կազմում ահա:

Այն ժամանակ, երբ քրիստոնէութիւնը հռոմէական կայսրութեան մէջ յաղթեց հեթանոսութեան, այն է՝ Գ. դարու ընթացքում և Ե. դարու սկզբին, քրիստոնէութեան մէջ սկսան արդէն այն դաւանական վէճերը, որոնք այնքան վնասակար ազդեցութիւն ունեցան թէ՛ ժամանակակից և թէ՛ ապագայ սերնդի վերայ և գործի կրօնը դարձրին բառի և տառի կրօն:

Քահանայական դասակարգն առանձնապէս Ա-

րեւելքում երկու հուսակցութեան բաժանուեցաւ: որոնցից իւրաքանչիւրը կոչուեցաւ այն տեղի անունով, ուր կրթուած էր, այն է՝ Աղէքսանդրացիք կամ Անտիոքացիք: Աղէքսանդրիայում նոր կրօնը պատուաստուեցաւ հին հեթանոսական—հելլենական քաղաքակրթութեան և եգիպտական—միստիկական կրօնական փոխադրութեան վերայ. դարմանալու բան չը կար ուրեմն, երբ այդ հին տարրերն իրենց ազդեցութիւնն հրամայական եղանակով էին արտայայտում:)

Բոյորովին հակառակ ուղղութիւնով դարգացաւ քրիստոնէական վարդապետութիւնը Անտիոքացոց մէջ: Անտիոքը, որ այն ժամանակ նոյնպէս մի հելլենական քաղաք էր և քառորդ միլիոնից աւելի բնակիչ ունէր, միշտ քաղաքականութեան և վաճառականութեան վերաբերութեամբ հակառակորդ էր եղել նեղոսի մայրաքաղաքին, Ալէքսանդրիային:

Այս մրցակցութիւնը փոխանցուեցաւ և մտաւոր ու հոգևոր խնդիրներին: Քրիստոնէայ վարդապետներն Անտիոքի զուրկ էին իրենց պաշտօնակիցների վերացական ոգուց, սրան աւելացաւ և այն հանգամանքը, որ ասորա—պաղեստինեան քրիստոնէից մէջ քրիստոնէութեան հիմնադրի մարդկային տիպարն սերնդէ սերունդ աւելի կենդանի էր մնացել: Այդ տեղ կազմուեցաւ մի աւելի պատճառական (rationalistische) ուղղութիւն, Այ մի դիպուածում չէին ցանկանում այդ տեղ Մարիամին երկրային յատկութիւններից աւելի մի բան սեփականելն կամ նրան աստուածային յարգանք մատուցանել: Աւտի և նորան տուին «Χριστοσοδόχος» (Քրիստոսածին) մականունը (մինչդեռ Ալէքսանդրեան դպրոցը նրան θεοτόκος = Աստուածածին մականունն էր տուել) Ինչպէս ալէքսանդրեան դպրոցը չորս մեծ «եկեղեցու ջահեր» ունի. Աթանասին, Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Նազիանզացուն և Գրիգոր Նիւսացուն, նոյնպէս և անտիոքացոց դպրոցն, Թէոդորոս Ճարսնացուն, Յովհան Ոսկերերանին, Թէոդորոս Մոպսիեստացուն և Եփրեմ Ասուրուն, Մանաւանդ Թէոդորոսը, որ մի ազատամիտ մեկնիչ էր և սուր քննադատ որ իւր հատու գէները նախ Ալէքսանդրեացոց դէմ ուղղեց, Այդ դպրոցի ներկայացուցիչների կողմից յաջորդեցին սուր պատասխաններ. հետոհետեւ աւելի և աւելի կղերիկոսներ վիճարանութեան մէջ մտան:

Այս վիճարանութիւնը սարսափելի կերպիւրորդութեցաւ այն ժամանակ, երբ Թէոդորոսի աշակերտներից նեստորը Կ. Պոլսի—այսինքն՝ կայսե-

1. Այս յօդուածը, որ մի ամիսով եւ հակիրճ պատմութիւն է քրիստոնէութեան տարածման արեւելեան Ասիայում, թարգմանում ենք Միւնխէնի յայտնի, պրօֆէսոր Նեքի Թերթիւշուած, «Allgemeine Zeitung»-ի գիտնական յանդուածից, 8ten Beilage Zur Allgemeinen Zeitung, 1895 № 95 Sp. Die Nestorianische Kirche und ihre Bedeutung էր. 1—5:

Այս համառոտ պատմական զեկուցումն ճետաքրքրական է եւ այ ընթերցողներին համար, որովհետեւ նեստորականութեան պատմութեան ճետ շատ տեղ կապուած է եւ հայաստանեայց եկեղեցու պատմութիւնը սկսած նեստորական աղանդի ծագումից մինչեւ նրա արեւելեան Ասիայում տարածուիլը: նեստորականութեան պատմութեան համար շատ նիւթ է տալիս եւ հայկական մատենագրութիւնը, որից սակայն նորագոյն գիտութիւնը չէ կարողացել ըստ կարելոյն օգտուել:

1. Մագրից դուրս ենք թողնում մի քանի պարբերութիւն, որոնց ստուգութիւնը կասկածելի է եկեղեց. պատմութեան տեսակէտով:

րութեան մայրաքաղաքի—պատրիարքութեան ամո-
 ուր նստաւ: Իւր գրաւիչ ճարտասանութեան բո-
 յոր ուժով սկսաւ նա անտիոքեան վարդապետութիւնը
 պաշտպանել: Նրա ընդգէժ գուրս եկաւ Ալէքսան-
 դրեայի բռնակալ (?) , իշխանասէր (?) և սրամիտ պատ-
 րիարք Պիւրեղը և տասներկու անաթեմաներ արձա-
 կեց Տերձուածողի ընդգէժ: որոնց նետորը նոյնչափ
 նզովներով պատասխանեց: Երկիւղ կար թէ կատար-
 եալ Տերձուած պիտի ծագի: ուստի Թէոդորոս կայս-
 րը, որ նետորին համակիր էր, կազմեց (երրորդ)
 տիեզերական ժողովը Եփեսոսում (431): Այս տեղ
 Պիւրեղը բոլորովին իւր բնաւորութեան համապա-
 տասխան կերպիւ վարուեցաւ(?): առանց սպասելու:
 որ իտպական և ասորական եպիսկոպոսունք և պատուի-
 րակները գան: բացաւ նա ժողովը և բանադրեց նետ-
 տորին և իւր դաւանանքն ընդունել տուաւ իրբն
 ուղղափառ:

Ասորոց համաժողովն էլ շտապեց բնականարար
 գրան իրբն պատասխան Պիւրեղին բանադրել: Այն ժա-
 մանակ պաշտպան կանգնեցին Պիւրեղին մայրաքաղաքի
 վանականներն և ժողովորդը, իսկ տատանուող կայս-
 րը, յեղափոխութիւնից սարսափելով իւր ամբողջ
 ազդեցութիւնը գործ գրեց հաշտեցնելու երկու կու-
 սակցութիւններին: Այսպէս յաջորդ տարին մի դա-
 ւանութիւն կազմուեցաւ: որին ստորագրեցին Պիւ-
 րեղ Աղէքսանդրացին և Յովհաննէս Անտիոքացին
 իրենց ամբողջ կուսակիցներով:

Նետորը սակայն մերժեց այդ մեծաւ մա-
 տամբ իւր կուսակիցներից լքուած, Տերձուածող
 հոշակուած, մեռաւ նա քրտորանքում (440): Մի-
 այնակութեան մէջ սակայն իւր վարդապետութիւնը
 զարգացրեց. այդ վարդապետութեան հիմնական
 սկզբունքները Քրիստոսի երկու բնութեանց որոշու-
 մին և աստուածային ու մարդկային յատկութիւնների
 փոխադարձ ազդեցութեան ուրացումն էին: Քրիս-
 տոս նրա համար Աստուած էր և Մարդ, ոչ Աստ-
 ուածամարդ, իսկ Մարիամը միայն երկրային և ոչ
 մեղաքարաւ մայր Փրկչի:

Թէպէտ և ասորի քրիստոնեաների մեծ մասը
 Եփեսոսի հաշտեցուցիչ դաւանութեան յարեցան:
 այնու ամենայնիւ նետորին կուսակից մնացին շա-
 տերը, որոնք մի քանի տեղերում սերտ շարկապ-
 ուեցան միմեանց հետ: Ամենամեծ նետորական հա-
 մայնքը Անտիոքումն էր, ուր Ասորի պատրիարքը և
 կայսրը նրանց անվրդով ապրել էին թողնում: Սակայն
 չէ երևում: որ դրանք մի խիստ և ամուր կազմակեր-
 պութիւն ունեցած լինին: Դրանց գոյութիւնն էլ
 այդ տեղ երկար չը տևեց: Կրթ շորրորդ տիեզերա-
 կան ժողովը Գաղկեզոնում (450) կրկին անգամ

նետորականութիւնը իրբն մեղորութիւն դատապար-
 տեց: նոր կայսր Մարկիանոսի օժանդակութեամբ
 կամ գոնէ առանց նորա ընդդիմութեան մի մեծ
 ընդհանուր հալածանք սկսաւ Տերձուածողների ընդ-
 գէժ: Այդ ժամանակ նեղն ընկած նետորականները
 հոովմէական սահմանն անցան և ապստամեցին
 Պարսկա—Սասանեան երկիրները, ուր նրանց երկրի
 համբերատար (tolerant) իշխանները կամակար սիրով
 ապստամարան տուին: Փախստականների գլխաւոր
 ժողովատեղին Եգեսիան էր, ուր վաղուց ի վեր քը-
 րիստոնեայ մի գաղութ կար, սկսած բնիկ Երզար-
 ների սերնդի իշխանութեան օրերից: Սրանց հետ ահա
 ձուլուեցան նետորականները: այդ տեղ ծագեց մի
 դպրոց, որ շուտով իւր առաքելալներն ուղարկեց
 գէպի ամենայն կողմերը և ցրուած համայնքները
 միացրեց: Քաղգէարէնը դարձաւ եկեղեցական լե-
 զու և Սելէկեա—Տիրոսնի մեծ եկեղ. ժողովում
 նետորականների վարդապետութիւնը վախճանական
 կերպիւ որոշուեցաւ (500 թուին): Այդ միջոցին
 դրանք արդէն բաւական զօրաւոր էին:

Սակայն հէնց ուղիղ այն ժամանակ, երբ նետ-
 տորականները Պարսկաստան ապաւինեցին պարսից
 տէրութեան մէջ ծանր ներքին կրօնական կռիւներ
 տեղի ունէին, ինչպէս որ առ հասարակ այն ժամա-
 նակները կրօնական կռիւներն ամբողջ արեւելքը վեր-
 դաջում էին: Ներքին Ասիայում գերիշխանութեան
 համար մարտառում էին Քուզդայականութիւնն ու
 Բրահմինականութիւնն: Առաջաւոր Ասիայում դա-
 նազան հոսանքները քրիստոնէութեան մէջ, իսկ մի-
 ջապարտում հին Ահուրամադդայի կրօնը նոր Մադդա-
 կանութեան հետ: Այս վերջին կրօնս իւր հիմնա-
 դրբի Մադդակ պարսիկ մոգի անունով է կոչուած
 և հիմնուած է հասարակապարտութեան (Communisme)
 վրայ: Այս ազանգս երևան եկաւ զօրաւոր Քորագ
 (Պաւատ) Շահի թագաւորութեան միջոցին (491—
 531): որ տէրութիւնը ստիպուած էր պաշտպանել
 ընդգէժ Զինացոց, Տաճիկների, Խազարների և Հո-
 ուոմների: Այս պաշտպանութեան գործը նա արու-
 թեամբ էլ գլուխ հանեց: Պաւատը պաշտպան հան-
 դիսացաւ Մադդակիաններին, բայց այդու ուղղափառ
 մոգպետների հետ թշնամացաւ: և սրանք մի ապրս-
 տամբութիւն առաջ բերին, որի ժամանակ Շահը մի
 առ ժամանակ ձերբակալուած մնաց: Քրիստոնեանե-
 րը, որոնց Մադդակի սկզբունքները, սեփականու-
 թեան և ամուսնութեան ջնջումը խոտելի էր երե-
 ում: նոյնպէս հակառակեցին այդ ազանգաւորնե-
 րին: Սրանց վրայ մի ծանր յարուած տեղաց այն
 ժամանակ, երբ Պաւատի որդի և անազուն Խոսրովը
 իւր հօր ձերութեան պատճառաւ ազդեցութիւն
 ձեռք ձգեց կառավարութեան գործերի վերայ: Մի

ցոյցի ժամանակ որին առաջնորդում էր ինքը Մագ-
դակը՝ յանկարծուստ արքայորդու սպասադիներուս
գնդերն յարձակուեցան ամբողջ վրայ և հաղարա-
ւոր մարդիկ կտորեցին անխնայ կերպով: Մագդա-
կին կայանաւորեցին և խաչեցին: անառաջնորդ մնա-
ցած աղանդաւորներն Նեստորականների քարոզու-
թեան եռանդի առարկայ դարձան:

Երբ Խոսրով Անուշիրուան (Անմահ) կոչուածը
դահը բարձրացաւ և «արքայից արքայ» անուանեց
իրեն (531—579), յանչափս պաշտպան հանգիստ-
ացաւ Նեստորականներին: Այս մեծ աշխարհակալը
տարածեց իւր տէրութիւնը գէպի ամենայն կողմը:
ծաղկած Անտիոքը կործանելով և նրա բնակիչներին
Պարսկաստան գաղթեցնելով՝ ծանր հարուած տուաւ
նա Հռոմներին: նրա իշխանութիւնը հասնում էր
մինչև Կոզոս գետի միւս կողը: մինչև Թուրանի հար-
թութիւնն և Արարիայ թերակղզու հարաւային ծայ-
րը: Այդ միջոցին գործունեայ Մարաբար, որ 530 թ.
սկսած Սելեկիա—Տելլոնի պատրիարքն էր, անուանու-
եցաւ կաթուղիկոս (καθολικός) բոլոր Պարսկաս-
տանի քրիստոնէաների (բացի հայկականից) և Նես-
տորականութեան առաքելները հարիւրներով ցրուե-
ցան անասման տէրութեան երկրները և ամենու-
րեք եկեղեցական համայնքներ կազմեցին: Մարա-
բար որ առաջ մոգ էր, Ալէքսանդրիայում քրիստո-
նէայ էր դարձել: այդ տեղից նա իւր հետ բերել էր
յուճական փիլիսոփաների ծանօթութիւնը: մասնա-
ւորապէս Պլատոնի և Արիստոտելի: Նեստորական-
ների հարիւրաւոր դպրոցներում հելլէնական մատե-
նագրութիւնը քաղղէարէնի և արաբերէնի թարգ-
մանուեցաւ և այդու հելլէն դասական քաղաքակը-
թութիւնն առաջին անգամ տարածուեց Արարիա-
յում: Այս տեղ, Եմէնում Նեստորականները պա-
տահեցան Յակոբիկներին (միաբնակ), որոնք Արիս-
տինեայի իշխանի զէնքերի հովանու տակ հարաւից
սկսել էին գէպի հիւսիս տարածուել: այնու ամենայ-
նիւ Խոսրովի զօրութիւնը գերակշռութիւն տուաւ
իւր պաշտպանած քրիստոնէական ուղղութեան (Նես-
տորականութեան):

Բայց Պարսից սահմաններից միւս կողմն էլ
տարածուում էր Սիլեկիայի քարոզչութիւնը: Հընգ-
կաստանում առաջ եկաւ մի մեծ րազմութիւն եկե-
ղեցական համայնքների, այս քրիստոնէայք Թովմա-
յական քրիստոնէայք (Հնդկաստանի աւանդական
նահատակ առաքեալ Թովմայի անունով այգպէս
կոչուած) էին անուանում:

Նոյնպիսի համայնքներ կազմուեցան Թուրանի
հարթութիւններում ու Թիանշան ձիւնապատ լեռ-
ների միւս կողմում:

Խոսրով Անուշիրուանը պալատական նշանաւոր
պաշտօնները Նեստորականներին տուաւ: մասնաւոր
իրրե զիւանագիրներ սրանք մեծ ծառայութիւններ
էին անում թագաւորին: Ասորական այրուելնր, ո-
րով նրանք զրոււէին, այսու ամբողջ տէրութեան
մէջ պաշտօնական դարձաւ և քաղղէարէն ս: Գիր-
քը նոյնչափ յարգուած էր: որչափ Զինդաւեստան
Հակառակ այս վերջինիս պատեւունքներին, որ հրա-
մայում էր դիակները գուրս գնել փտելու: արքա-
յից արքան իրանուք տուաւ քրիստոնէաներին ի-
րենց մեռելներին թաղել: Առ հասարակ նա իւր
կեանքի վերջին տարիներում աւելի և աւելի հակ-
ուում էր գէպի քրիստոնէից կողմը: շատ անգամ
նա տատանուում էր՝ թէ արդեօք քրիստոնէայ գառ-
նայ թէ ոչ: Նեստորականները յամենայն գէպս նը-
րան ամենամեծ զիջումները կ'անէին: Թէպէտեւ այդ
րանը գլուխ չ'եկաւ: բայց այս Սասանեան իշխանը
իւր գրեթէ յիսնամեայ կառավարութեան միջոցին
քրիստոնէութեան գոյութիւնն իւր տէրութեան մէջ
ամենուրեք ամրացրեց:

Նոյն չափ համակիր գէպի Նեստորականները ցոյց
տուաւ իրեն Անուշիրուանի որդի Խոսրով Պարուէզը
(590—628): Սանուածեց ամբողջ հռոմական Առա-
ջաւոր Ասիան և Եգիպտոսը: սակայն երբ Նեստորա-
կանները ինքնազուլու կաթուղիկոս գրին իրենց հա-
մար, զայրացաւ նրանց դէմ և հետ զհետէ երես
դարձրեց նրանցից: Բայց Հռոմների կայսր Հերակլի
յուսահատտական յարձակմամբ Սասանեան իշխա-
նութիւնը մի սոսկալի հարուած ստացաւ: որի շը-
նորհիւ սա մոլիմ Արաբների աշխարհակալական
յարձակման զիմադրելու անընդունակ դարձաւ:

Քանի մի խորտակող ճակատամարտերի մէջ Իսլամը
յաղթեց Սասանեան իշխանութեան: Երկու տաս-
նեակ տարիների ընթացքում այդ անասման տէ-
րութիւնը, որ մինչև Կոզոս և Աքսոս գետերն էր
տարածում, նուաճուեցաւ նոր համաշխարհական իշ-
խանութիւնից: Սակայն մինչ Մոսլէմները Պարսերին
իրրե Հեթանոսների մոլեռանդ կատաղութեամբ հա-
լածում էին, ջնջում էին, դարձնում կամ գուրս էին
քշում: Քրիստոնէայք խաղաղութիւն էին վայելում:
նրանք միջարում էին քարաջր (գլխահարկ) և իրաւունք
ունէին իրենց կրօնը դաւանել աննշան սահմանափա-
կութիւններով: Բայց այլ ևս իրենց համայնքների
տարածելու գործը խափանուեցաւ: ընդհակառակն
զրանցից շատերը չ'իք դարձան: խեղճացան կամ
անցան Իսլամականութեան: Մասնաւոր տեղի ունե-
ցաւ այս Արարիայում: այնտեղ Քրիստոնէաների
թիւն իջաւ մինչև առ սակաւի (minimum):

Համեմատաբար բազմաթիւ մնացին նրանք ի-

րենց ընդ կերպում: Միջագետքում (Ալ Բեդրե): Սիլեկիայի (արդ Մադային վերակոչուած) պատրիարքը մնաց առաջուան պէս նրանց զխաւորը: որին ճանաչուած էին մինչև իսկ ցրուած արեւելեան եկեղեցիք: Եւ այժմ ինչպէս և սուաջ նեստորականները մնացին իբրև ներկայացուցիչ Տին գիտութիւններ: Երբ արարական աշխարհակալութեան մրրիկն անցաւ և արրասեան խալիֆներն սկսան բարեկեցութեան յետեւից լինել, երբ նորաչէն Բաղդատում: Մադայնի շրջակայքում: արուեստ և գիտութիւններ խնամել սկսան: այն ժամանակ նեստորականները նոր դարաշրջանի ծառայութիւնը յանձն առին: Արու Զաֆար ալ Մանսուրը: խալիֆների մէջ առաջին ազատամիտն: Տիմնեց 762-ին մի նոր գպրոց Բաղդատի քրիստոնէից համար: և կրկին: այս անգամ աւելի ազդեցիկ կերպիւ: քան Սասանեանց ժամանակ: նեստորականները դարձան իրենց մուսլիմ նուաճողների վարժապետը Տին յունական իմաստութեան: Մինչ զեռ քրիստոնեայ արեւմուտքում Պղատոնի և Արիստոտելի անուններն հաղիւ գիտէին: Բաղդատի խալիֆները ժողովում էին: մանաւանդ Ալ Մանսուր: Տին ժամանակներ թանկագին ձեռագիր գանձերն և զիզում էին իրենց մատենադարաններում: Սքոլաստիկները (Scholastiker) ուսան ճանաչել Տներին ըստ մեծի մասն արարական թարգմանութիւններից:

Նեստորական քրիստոնէական առաքելութեան այդ միջոցին զիմել էր դէպի Միջին Ասիա: Այդ տեղ: Եպսքարտէսի հարթութեանց վրայ: Բալքաշի լճի և Նլի գետի ափերին և թեան—չան լեռների միւս կողմում: Թարիմի տափաստաններում: րնակուած էին այդ դարերում: ազգերի դաղթականութեան ժամանակ և սպա: տաճիկ (Թուրք) ցեղեր: որոնք ազգակցութեամբ միջին օղակ էին Արիների և Մողոլների: Ընդ դէմ Զինաց և Պարսից վարած շատ պատերազմներից յետոյ որոնք 500 թ. Հեոյ—հայի կամ Հեփթաղների տէրութիւնն էին հիմնել: Հենց այդ ժամանակին էլ դրանք արդէն մասամբ քրիստոնեայ են հանդիսանում և անկասկած է: որ դրանք ժամանակի ընթացքում բոլորովին քրիստոնէութեան դարձած են: Հեփթաղներից: որոնց րնակութեան միջաշխարհն Նլի գետի դրախտանման հովիտն էր: որ «Սիրիական Բտալիա» է կոչուում: յառաջ անցան քրիստոնէից քարոզիչները դէպի արեւելք: Թափառական Մողոլների երկիրը: դէպի Շամոյի անապատը: Այդ տեղ նրանք հանդիպեցան հարաւից և հարաւ արեւելքից եկած Բուդդայական քարոզիչներին: որոնց հետ շատ խիստ կուռի բռնութեան: Միջին Ասիայի կրօնական զերիշխանութեան պատճառով: Սակայն քրիստոնեայ առաքելութեան հոսանքն առանց կանգ առնելու յառաջ

անցաւ: Զինական «Գուն—Ելի—տու» (աշխարհադրութեան) կոչուած զիրքն հաղորդում է: որ մեծ կայսր Թայդոնգի կառավարութեան միջոցին (636) թուին առաջին քրիստոնէաներն եկան Զան—ան քաղաքը (ուր յետոյ դրանք մի մեծ քարի արձան կանգնեցին: որի վերայ իրենց հաւատի վարդապետութիւններն էին փորագրած) և սկսան քարոզել: Գարէ արձանը կանգնեցաւ 781 թուին: կանգնողը մի վանական միանձն էր: այդ արձանը պատահաբար գուրս հանուեցաւ հողի տակից գրեթէ 900 տարի յետոյ (1625): Սին—եան քաղաքի մտա: որ գտնուում է Շան—տու գաւառում: Գա մի մարմարիոնէ սալ է 74 մէտր մեծութեամբ: որի ծայրին մի խաչ կայ փորագրած: դրա տակը կարգում ենք չինական և ասորական գրերով հետեւեալ տեղեկութիւնը: «Այօհ» (ասորերէն—Աստուած: արար: Ալլահ: երբայցերէն էլլահայ: էլ) որ ամենայն ինչ ստեղծեց: Ամենազօր և Ամենակատարեալ ստեղծեց քարի և չար ոգին և բոլոր կենդանի էակները: ամենից վերջը մարդուն: որ այնպէս սուրբ էր: ինչպէս ինքը: Բայց չար ոգին մոլորեցրեց մարդուն: և այդու ամենայն ինչ: որ մեղսական է: աշխարհ եկաւ: սխալ օրէնք և սուտ հաւատը: Այս պատճառաւ Մեսսիան: քարի ոգին: մարդկային կերպարանք առաւ: որ մարդկանց ազատէ մեղքից: Ամենասուրբ մարդը Յուդայի երկրում: ծնաւ մի անապական կուսից: մի նոր աստղ փայլեց նրա ծննդեան ժամանակ և թագաւորներ եկան նրան երկրպագելու: Այսպէս կատարուեցան բոլոր մարդարեւութիւնները: Մեսսիասի գործերի և վարդապետութեան մասին գրուած 27 գրքերը (Նոր Ատակարան) երանութեան ճանապարհն են»:

Թայ—ցունգ կայսրը: որ մի կրօնական տեսակետով զիջանող մարդ էր: նոր օրէնքով նեստորականներին թոյլտուութիւն շնորհեց և քարոզիչներին ոչ մի խոչընդոտն չը յարոյց: Այդ ժամանակ տէրութեան մէջ հարիւրաւոր եկեղեցիք և վանքեր կանգնուեցան: որոնք Թայ—ցունգի յաջորդի ժամանակ աւելի շատացան: Երկու սերունդ վերջը Բուդդայական վանականները մի հալածանք յարուցին: որ ամբողջ տէրութեան մէջ տարածուեց: սակայն արդէն քիչ յետոյ քրիստոնէից ազատութիւն շնորհուեցաւ և նրանք յետ ստացան իրենց տաճարները: Ապա երբ դարերից վերջը այն յուշարձանը գետնից հանուեցաւ: հրամայեց Թէն—քի (Շէն—քաօ—քի) կայսրը: որ այդ մի յատուկ տաճարի մէջ Զինդ—նան—ֆուում պահեն: ուր դա ցայսօր ևս գտնուում է:

Ահա ինչ յեղափոխութիւններ տեղի ունեցան յաջորդ դարերում Միջին Ասիայում: Հեփթաղնե-

րի տէրութեան յաջորդեցին այլ տաճիկ իշխաններ, որովհետև այն ցեղերը, որոնք արևելեան Մոզոլներից մղուած, միմեանց վերայ ընկան, անցան նաև խալիֆների տէրութեան սահման, սկսած Թ. դարուց, Հարիւր տարի յետոյ Սելջուկը իւր ամբողջ ժողովրդով Իրանի վերայ յարձակուեց և այդ տեղ ընդունեց քրիստոնէութեան փոխանակ իսլամ: Այդ միջոցից սկսած իսլամականութիւնը տարածուեց դէպի յետ թուրքական տէրութեան մէջ:

Բայց այդ ժամանակներում թուրք ստրուկներից նրանք, որ յոյների մօտ էին գալիս, դեռ ևս իրենց ճակատի վերայ կրում էին խաչի նշանը դըրոյնուած: ԺԲ. դարու սկզբում մոզոլական Բիթան կամ Բիթացոց տէրութիւնը կործանուեցաւ հիւսիսային Բենից կամ Նիուչնից, Բիթացոց մի մասը քաշուեցաւ դէպի արևմուտք և Ելիւթաչի խանը մի տէրութիւն հիմնեց 1125-ին Թուրքիստանում, որ Արալի լճից մինչև Թքան — դանի միւս կողմը Թարիմի տափաստանները տարածուեց, Սրանց պետը կոչուում էր «գուրխան» (= ժողովրդի պետ) և նստում էր Քաշգարում: Սըրանցից դէպի արևելք հիմնուեցան Աւիգուրների և Բերայիանների տէրութիւնը: Այս երկու տէրութիւնների մէջ էլ իշխում էր քրիստոնէութիւնը: Արաքիտայի տէրութիւնն անկասկած քրիստոնէական էր, ինչպէս դրա իշխանը. թէ ինչքան այդ ճշմարիտ էր ուիզուրական տէրութեան վերաբերութեամբ, պատմում են արաբական աղբիւրները 1000 թուականից, դրանք Քարայետներին ուղղակի քրիստոնէայ են անուանում: Աւիգուրական և ասորական այրեանարանների կատարեալ նոյնութիւնը ապացուցեց վերջերս ռուս լեզուագէտ Ռադլոֆն անկասկածելի կերպիւ: Ահա երևում են նեստորական քարոզիչներ և հիւսիսային Մոզոլիայում թէ Բայկալ լճի շըրջակայքում և թէ դէպի հիւսիս, Սիրիոյում:

Նեստորականութեան տարածումը սակայն առաջացաւ այն մեծ պաշտպանութեան շնորհիւ, որ Սասանեան թագաւորները քրիստոնէութեան այս ուղղութեան ընձեռեցին: Սրա պատճառն էլ այն էր, որ նոր պարսիկները իրենց հպատակ քրիստոնեաների կրօնական հակառակութիւնից Հոռոմների տէրութեան դէմ օգտուել էին կամենում: Այս երկու մեծ պետութիւնների մէջ եղած կռիւը մի հեռաւոր և խորին նշանակութիւն ունէր. Սասանեանների ոտքի կանգնելը, ինչպէս Ռանքէն ասում է, մի մարտ էր ազգայնութիւնների ընդէմ հոռոմական օտար գերիշխանութեան և հելլենական քաղաքակրթութեան: Աղէքսանդր մեծից սկսած Արևելքը կախումն ունէր Արևմուտքից, Աղէքսանդրի յա-

ջորգների ժամանակ հելլենական քաղաքակրթութիւնը թափանցեց առաջաւոր Ասիայի տէրութիւններից և Միջերկրականից մինչև Ինդոս գետը, Նոյնպէս և պարթևական տէրութիւնը կարող չեղաւ այդ զօրաւոր ազգեցութեան դիմադրել և հելլենացաւ: Սասանեաններով սկսաւ ընդդիմութիւնը, նորա պարսկական թագաւորները վերանորոգեցին հին իրանեան կրօնը և Ձրագաշտի վարդապետութիւնը, ինչպէս այդ էր Պարեհի ժամանակ, Հուտով չքացաւ և հելլենականութեան մասին յիշողութիւնը, միայն Աղէքսանդրի դիւցազնական պատկերը մնաց միպական երգերում այդ էլ բոլորովին պարսկացած: Առաջին պարսիկ հերոսի, Սիրուսի նման լուսոյ մեղմ կրօնի հետևողները լայն համերատարութիւն էին ցոյց տալիս այլադաւաններին. այսպէս նրանք թող էին տալիս իրենց իշխանութեանց տակ ապրելու և քրիստոնէից. մանաւանդ որ դրանց կրօնական գաղափարներն ու աւանդութիւնները իրենց կրօնին բաւական յարմարացնել կարելի էր (°.'°):

Այն սարափելի համաշխարհային փոթորիկն, որ յարոյց Չինգիզիսան Թէմուջին և որ մի թայֆունի տարրական ուժով ազգերն աւելցց ու ոչնչացրեց, կործանեց նոյնպէս ուիզուրական և քետայական տէրութիւնները, Հարիւր հազարաւոր զոհերի մէջ, որ այս մեծ արիւնխանն աշխարհակալ իւր կատաղութեան զոհեց, կային անշուշտ և շատ քրիստոնեաներ: Սակայն Չինգիզիսանը դրանց բոլորովին ջրնջել չը կարողացաւ, թէպէտ և նրանց քաղաքական ոյժն ընդ միշտ խորտակեց, Անդհակառակն Չինգիզիսանի յաջորդների ժամանակ նեստորականները աւելի համարձակութեամբ վեր բարձրացրին իրենց գլուխը և նրա թոռան Այյուկի ժամանակ կարող եղան մինչև իսկ մոզոլական մայրաքաղաքում: Կարակորումում մի եկեղեցի կանգնել, որ խաղաղ գոյութիւն ունէր երկու մզկիթի և տան և երկու բուզղայական տաճարների կողքին: Այդ ժամանակներին իսկ յայտնի եղաւ Արևմուտքում որ ներքին Ասիայում գոյութիւն ունին մեծ քրիստոնէայ համայնքներ:

Մի խուլ համբաւ Ասիայում եղած մի զօրաւոր քրիստոնէայ իշխանի մասին, որ հոգեւոր ու աշխարհական իշխանութիւն ունէր միևնոյն ժամանակ, Եւրոպա հոտաւ 1145 թուականին Բիրլոսի եպիսկոպոսի միջոցաւ, Այդ խորհրդաւոր իշխանին անուանում էին Յովհաննէս երէց, Կարճ ժամանակ դրանից յետոյ, 1165 թ. լոյս տեսաւ մի լատիներէն փոխարեբական—աւանդական գրուածք, ուղղուած այդ առեղծուածական անձի կողմից Արևմուտքի իշխաններին: Այս գրքեց Աղէքսանդր Գ. պապին մի պատասխան գրե-

լու որ անձամբ տանելով յանձնեց նա իւր անձնական բժշիկ Փիլիպպոսին, Սակայն սա չը հասաւ մինչև Ասիայի խորքը: Յովհաննէս երիցու մասին սակայն տեղեկութիւններն սկսան շատանալ, ուստի Իննովկէնտիոս Գ. պապը վճռեց մեծ խան Աայուկին ուղարկելիք քարոզչութեան որ յանձնել էր նա Պլանիս Կարպինին (1246), պատուիրելու այդ քրիստոնեայ թագաւորի մասին հետազոտութիւնը: Նոյնն արաւ Ֆրանսիայի թագաւոր Լուդովիկոս Սուրբը, երբ 1248-ին Լոնժիւմելին և 1253-ին Ռուբրուքիուսին (Ռուբլսրի) Կարակորում էր ուղարկում: Այս բոլոր ճանապարհորդներն անձնական փորձով այն հետեանքի եկան, որ թէպէտ և Ասիո՞վ վերջին քրիստոնեայ տիրապետը Զինգիզխանի գէժ վարած պատերազմում ընկած և նրա տէրութիւնը կործանուած էր, բայց այնու ամենայնիւ բազմաթիւ քրիստոնեայ գաղութներ կային Մոզոլների տէրութեան մէջ: Առանձնապէս զարմանք պատճառեց Ռուբրուքիուսին այն հանգամանքը, որ մայրաքաղաքի քրիստոնեայ նեստորականները փառաւոր թափորով նորան զիմաւորեցին և իւր ուղեկիցների հետ եկեղեցի առաջնորդեցին, ուր եկեղեցական պաշտօնը առանձին շքեղութեամբ կատարուեց այնպէս, ինչպէս կատարուում էր իւր հայրենիքում: արեւմտաքում: Ինամով ժողովեց Ռուբրուքիուսն բոլոր տեղեկութիւնները Միջին Ասիայի քրիստոնէից եկեղեցու և հին տէրութեան անցեալի վերաբերութեամբ և առաջին անգամ խնդիրը պարզեց: Ապա երբ Պոլսո կղերայրները ձեռնարկեցին իրենց ճանապարհորդութիւնը գէպի արեւելեան Ասիա և հին համաւր հաստատեցին, Նիկողայոս Գ. պապը, որ առանձին ծիգն էր թափում արեւմտեան և արեւելեան եկեղեցիք միացնելու փորձեց նեստորականներին իր գերիշխանութիւնն ու առաջնութիւնն ընդունել տալ, Փորձն անյաջող անցաւ. արեւելեան ասիական քրիստոնեայք պահեցին իրենց անկախութիւնը: Աուրբայ մեծ խանի իշխանութեան մէջ Մարկո Պոլոն նախկին Քանգուտի տէրութեան մէջ շատ նեստորական համայնքներ գտաւ: Աուրբայի ժամանակ բոլոր պաշտօնների մէջ քրիստոնէական տարրը շատ մեծ էր. մեծ խանն ունէր և մի քանի քրիստոնեայ կանայք:

Իւլյան կոչուող հարստութեան ժամանակ (1279—1368) որ Աուրբայն էր հիմնել և որ Զինաստանի վերայ էլ իշխում էր, քրիստոնեաներն ազատ էին. նոյնն էր և յաջորդ Մինգ կոչուող հարստութեան ժամանակ (1368—1644): Միւս առաջաւոր ասիական երկրներում սակայն քրիստոնեայ հասարակութիւնները անհետացան հետզհետէ երկրորդ Զինգիզ-

խանի Լէնգ Քեմուրի շնորհիւ: Իսլամն ընկճեց այդ տեղերում քրիստոնէութիւնը:

Այսպէս ժամանակի ընթացքում միջին ասիական—քրիստոնեայ եկեղեցու մեծ միաբանութիւնը քակուեցաւ: Միջագետքում և հիւսիս արեւմտեան Հնդկաստանում գեռ նեստորականների ամբողջ մշնացորդները պահպանեցին իրենց գոյութիւնը, իսկ Մոզոլիայում և հիւսիս արեւմտեան Զինաստանում րնակուում էին նրանք ցրուած և մի առանձին ոյժ չէին կազմում այլ ևս: Հնդկաստանի Քովմայական քրիստոնեաներին Պորտուգալացոց տիրապետութեան շրջանում աշխատեցին յիսուսեան քարոզիչները հռովմէական կաթողիկ եկեղեցուն հպատակեցնել, Այս գործը յաջողուեց արդէն 1551-թուականին, երբ հիւսիսային ասիական նեստորականների մէջ մի հերձուած ընկաւ: Սրանցից մի մասը Պոլսի արքեպիսկոպոսի միջոցով ձանաչեց պապի գլխաւորութիւնը և ընդունեց 7 խորհուրդները, պահպանեց սակայն իւրեան գաւանդութիւնն ու արեւելեան ծիսակատարութիւնը: Այս կաթողիկ նեստորականները կոչուեցան «միաբանեալ քաղզէացիք»: «Զը միաբանած քաղզէացիք» Միջագետքում և Ասորիքում ընդունեցին առաջնուան պէս միայն երեք խորհուրդ (միբրտութիւն, հաղորդութիւն և ձեռնադրութիւն), զրանց քահանայք ամուսնացած են: Նախկին կրթութիւնը բոլորովին անյայտացաւ. վարդապետներն ու կոյսերը, որ սուրբ Անտոնիոսի կանոններով էին ապրում, աւելի և աւելի տգիտացան, հոգեոր կեանքը աղքատացաւ:

Ամերիկացի քարոզիչները մեծ եռանդ գործ դրին այդ եկեղեցու վերածնութեան համար և մի ժամանակ թուում էր՝ թէ նեստորականներն աւետարանական եկեղեցու գիրկն են ընկնելու յանկարծուստ. 1893 թուականի սկզբին լուր հասաւ, որ նրանք նոյնպէս են ձանաչել պապի գլխաւորութիւնը: Թէպէտ և այժմ հռովմէական եկեղեցուն յարած նեստորական երկու համայնքների ընդհանուր թիւն միայն 160,000-ի է հասնում: այնու ամենայնիւ այս մի ժամանակ զօրաւոր ասիական եկեղեցու հպատակութիւնը նշան է Հռովմի հեղինակութեան որոշ չափով բարձրանալուն:

Այս առաւել ևս նշանաւոր է այնու, որ արեւելեան Ասիայի նեստորականները ոչնչացած կամ ոչնչանալու վերայ են, Թէպէտ և Մենգ հարստութեան կայսր Շէն—եաո—կեն, ինչպէս յիշեցինք, այն սուրբ քարի համար մի նոր տաճար էր շինել սուել, Հանգամանքներն անփոփոխ մնացին երբ Մանչուք 1644—1646 թ. տիրեցին Զինաստանին և հիմնեցին գեռ այսօր իշխող Զինգ հարստութիւնը: Կայսր Կանգ—հին (1662—1722) մինչև իսկ առանձ-

նապէս յառաջ քաշեց քրիստոնեաներին և հասցրեց բարձրագոյն պաշտօնէութեանց և բոլորովին քրիստոնէական ազգեցութեան տակ ընկաւ: Սրա յաջորդները սակայն, մանաւանդ սոսկալի աշխարհակալ Կիկն—լոնը (1735—1596), որ Բուդապեշտինսկի թեման շատ յարած էր, յաճախ կրկնուող երկարատե ու արիւնալի հալածանքներ յարոյց քրիստոնէից դէմ և այդ ժամանակ հազարաւոր զոհեր տարաւ կրօնական մոլեռանդութիւնը: Այս հալածանքների պատճառը յիսուսականների չափազանց եռանդն էր, զրանք անշուշտ նեստորականներին ևս դարձնելու փորձեր արած կը լինէին և նրանց թիւն այդ կրօնական կոիւններից առաջ անկասկած շատ նուազած կը լինէր:

Այս է ահա անկախ ներքին ասիական քրիստոնեայ եկեղեցու վախճանը: Խորասուզուած և մոռացած, մասամբ զիտմամբ մոռացուած Թուրքեստանի նեստորական քաղաքակրթութեան վերայ հաստատուած տէրութեան գոյութիւնը: Ահա Ելի գետի շրջանում: Սեմիրիշինսկի քաղաքի մօտ, յիշեալ պարտները Պոյարկով և Պանտուսովը քիչ ժամանակ առաջ (1886-ից սկսած) գտան մի շարք նեստորական տապանաքարեր և բազմաթիւ այլ քարեր արձանագրութիւններով ծածկուած: Գրութիւնը ասորական էր և յաճախ փորագրուած խաչի նշանը նրանս ուսական սուրբ Գէորգի խաչին, Քարերի վերայ եղած անուններն են՝ օրինակ՝ Վարիյու—Յուխաննան (= Տէր Յովհաննէս), որ դարմանալի կերպով յիշեցնում է Յովհաննէս երեցին, ապա Ալէքսանդրոս, Յուլիա, Պետրոս, զրանց հետ միասին կարգում ենք և թրքական—մողոլական անուններ, ինչպէս՝ Նոնգու, Մասկուտ, Սոն—գուիւկայա և ինչ Մեր աչքի առաջ կենդանանում են մի ամբողջ շարք եպիսկոպոսներ և քարոզիչներ իրենց կանանցով և որդեկանցով, զրանցից շատերի բնաւորութեան ամբողջ նկարագիրն ենք ստանում: Այս տեղ թաղուածների մահուան տարեթուերը գտնուում են 850—1320 թ. մէջ, Այսպէս ուրեմն այս քարերը զարմանալի վկաներ են մի մեծ անցեալի:

Այդպէս հետախուզութիւնների ժամանակ կը յաջողի անշուշտ աւելի ևս լոյս սփռել այն ժամանակների և մանաւանդ Քեստացոց տէրութեան պատմական յարաբերութիւնների վերայ, Ինչպէս Լոռքսորի մուսիաներն և Կույունջուկի աղիւնները, այսպէս և Ելի երկրի յուշարձանները պիտի խօսեն անցած դնացած ազգերի ճակատագրի մասին:

Մի բան արդէն այժմ իսկ հաստատ է, նեստորականութիւնը մեծ զօրութիւն ունէր երբեմն Ասիայում և այդ զօրութիւնը գործ է դրել ոչ նուիրապետական, այլ քաղաքակրթական ձևով և

այնու մի այնպիսի նշանակութիւն է ձեռք բերել, որ արժէ արձանագրել պատմութեան տարեգրութիւնների և ազգագրութեան էջերի վերայ: Գա հելլենական իմաստութեան և գիտութեան պահպանն է եղել և երկուսն էլ միջնորդարար հասցրել է այն ազգին, որ այն ժամանակ հոգեկան կենսւթի բարձրագոյն զարգացումն ցոյց տուաւ և իւր կողմից հնրեր երկերի ուսումնասիրութիւնը կրկին Արեւմուտքին հասցրեց փոխանցարար: Այս նեստորականութեան մնայուն և համաշխարհական նշանակութիւնն է: Գրա հակառակ անցել է քրիստոնէական նեստորականութեան ազգեցութիւնը միջին արեւելեան և թուրք—մողոլական Ասիայի վերայ ազգերի գաղթականութեան փոթորիկի մէջ, անցել և ոչնչացել է այդ ազգեցութիւնը այնպէս ինչպէս շատ այլ քաղաքակրթութիւններ այլ տեղերում և այլ ժամանակներում:

Թարգմ. Ն. Բ.

ԱՌԱՃՆԵՐ ՎԱՆԱՅ ԲԱՐԲԱՌՈՎ:

Մէկու տունը շէն
Էրկսին կիսաշէն
Իրեքին խմտով անք:

Մէկ օր կանի բարուց բարեկենդանք.
Մէկէլ օր կը նստի սկոտանք:

Մէլ արաքը, մէջ վարագ,
Իս մացի անկարագ:

Մէջ ծաղկներաց ղոնդաղ.
Մէջ Խաւքերաց ղառղուն:

Մշակ աղէկ էմներ,
Ուր տուն մշակ կենէր:

Ենրոս ու գարի, իմ խոնցաւ
(հարբուս) վեր քն բարի:

Նախիր էկաւ վեր դարին.
Նախորդի մնիկ կայնաւ վեր բանին:

Նանէն մատաղ քո սիվտակ օտնեբաց.
Ասաց ղառղաւ ուր ճգեբաց:

Նէ գոլով Նէ շերեփով շամաւ ւփով (բոով):

Նէ դաշտի մրգինի՛
Նէ սարի թրքինի:

Նէ կնիկ ունիմ կծան,
Նէ խէր ունիմ ծեծան:

Նէ վեր գուն կը կայնի,
Նէ վեր շերեփն կը ղաղդի:

Նստեր պաղ սրախին,
Կը ծեծայ փուքն ու քամին:

Նստած մարդ թախտ փուշ կը կարծի:

Եախախն ըն քիրեմ թէ մախախուն:

Եատ արողին շալէ շապիկ,
Քիչ արողին շարէ շապիկ:

Եէն կենայ մեր տնիկ,
Ընուշ կենայ մեր կնիկ:

Եինական որ շիոթի,
Չարոս ոտներ կը դիտոթի:
Ոչ կու կեղայ. ոչ կու քայ: